ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 18.01.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/210

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝ ի դեմս Միեր Անանյանի

Մասնակցությամբ՝ «Վանարխ» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի և Ա. Պարանյանի (լիազորագիր տրված՝ 09.01.2018թ.)

ՈՒսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23786-18 գրությամբ «Վանարխ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) 01.10.2018թ. թիվ N 02/16.4/4827-18, 25.10.2018թ. թիվ 02/16.4/5362-18 և 25.10.2018թ. թիվ 02/14.1/6199-18 գրությունների պատճենների հիման վրա, 20.12.2018թ. թիվ 27/26-3/23786-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Վանարխ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Վանարխ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Վանարխ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին 11.01.2019թ. ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը:

«2018թ. մայիսի 17-ին «Վանարխ» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Ընկերություն) և <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի (այսուհետ նաև՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտե կամ Պատվիրատու) միջև կնքվել է Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» ծածկագրով պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

www.gnumner.am համացանցային կայքում 03.10.2018թ. հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ «Վանարխ» ՍՊԸ-ի և <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի աշխատանքների ձեռքբերման <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5>> ծածկագրով պայմանագիրը <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի կողմից միակողմանի լուծվել է՝ Պայմանագրի 2.1.3.-րդ կետի ուժով: Վերոհիշյալ պայմանագրի լուծման հիմքում դրվել է կատարման ընթացքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018թ. օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրությունները:

Մասնավորապես, կատարման ընթացքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից թե՛ 2018թ. օգոստոսի 29-ի և թե՛ 2018թ. սեպտեմբերի 18-ի արձանագրությունների հիմքում դրվել է՝ նախագծային կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված ժամկետների խախտված լինելը /կցվում են/:

Իրավական հիմքերը և հիմնավորումները.

<<Գնումներիմասին>> ՀՀ օրենքի (այսուհետնաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ինչպես արդեն հայտնել ենք՝ www.gnumner.am համացանցայինկայքում 03.10.2018թ. հրապարակված տեղեկատվության համաձայն՝ 2018թմայիսի 17-ին «Վանարխ» ՍՊԸ-ի և <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի միջև կնքված Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 ծածկագրով պայմանագիրը <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկի կողմից միակողմանի լուծվել է՝ պայմանագրի 2.1.3.-րդ կետի ուժով:

Հայտնում ենք, որ մինչև ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից 03.10.2018թ. պայմանագրի միակողմանի լուծման որոշման կայացմանը՝ բազմիցս փորձ է արվել բարդացնել պայմանագրով սահմանված աշխատանքների իրականացումը, քանի որ հանդիսանում էինք անցանկալի գործընկեր:

Արդյունքում՝ 01.10.2018թ. ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն թիվ 02/16.4/4827-18 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5>> ծածկագրով պայմանագիր լուծելու գրությունը և միևնույն ժամանակ ներկայացնելով «Վանարխ» ՍՊԸ-ի տվյալները՝ <<գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների>> ցուցակում ներառելու նպատակով:

Ի պատասխան վերոհիշյալ գրությանը՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալը հայտնել է.

<<Ուսումնասիրելով Ձեր 01.10.2018թ.թիվ 02/16.4/4827-18 գրությունը հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետը սահմանում է, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող

հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին:

Սակայն, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի տեղեկատվությանը կից ներկայացված հիմքերը ամբողջական չեն:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը տրամադրել պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018թ.օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններով ներկայացված պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ առաջարկությունները:

Միաժամանակ խնդրում ենք պարզաբանել՝ պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի 4-րդ կետին համապատասխան պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացված էսքիզային լուծումների վերաբերյալ դիրքորոշումը ի՞նչ ժամկետներում պետք է տրվի կատարողին>>:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղակալի դիտողություններին՝ <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեն>> 25.10.2018թ. գրությամբ պատասխանել է.

<<Ի լրումն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 2018 թվականի հոկտեմբերի 1-ի N 02/16.4/4827-18 գրության՝ կից ուղարկում եմ պատասխանատու ստորաբաժանման 2018 թվականի օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններից քաղվածքներ:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի 4-րդ կետով նախատեսված էսքիզային լուծումներ պարունակող փաստաթղթերը պատվիրատուին են ներկայացվել պայմանագրի նույն կետով սահմանված ժամկետի խախտումով:

Ներկայացված փաստաթղթերն ուսումնասիրվել են <<Վանարխ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցչի մասնակցությամբ: Արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու նպատակով վերջինիս տրվել է ժամկետ՝ մինչև 2018 թվականի սեպտեմբերի 17-ը: Ներկայացված փաստաթղթերը կրկին չեն

համապատասխանել պայմանագրի տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին>>:

Ի պատասխան վերոնշված գրության՝ ՀՀ ֆինանսների նախարարի առաջին տեղեկալի կողմից արձանագրվեցին ևս մի քանի խախտումներ, որոնք արտացոլվեն ել Կ.Բրուտյանի կողմից <<ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեին>> 06.12.2018թ. ուղղված թիվ 01.1/26-3/22514-18 գրությաբ, մասնավորապես՝

<<Ուսումնասիրելով Ձեր վերոհիշյալ գրությունները և ներկայացված հիմքերը՝ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 2018թ.մայիսի 17-ին կնքվել է «Պետության կարիքների համար աշխատանքների կատարման» N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 ծածկագրով պետական գնման պայմանագիր, որի գնման առարկա է հանդիսացել Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը:

Նշված Պայմանագիրը 2018թ. սեպտեմբերի 27-ին միակողմանի լուծվել է պատվիրատուի կողմից Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն, հաշվի առնելով, որ Պայմանագրի հավելված 1-ով հաստատված՝ տեխնիկական բնութագրի 4-րդ կետով նախատեսված էսքիզային լուծումներ պարունակող փաստաթղթերը պատվիրատուին են ներկայացվել պայմանագրի նույն կետով սահմանված ժամկետի խախտմամբ, հիմք ընդունելով 2018թ. օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններով ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման առաջարկությունը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:

Ներկայացված հիմնավորումների ուսումնասիրմամբ պարզ դարձավ, որ Պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի 4-րդ կետը սահմանվել է հետևյալ կերպ.

«Աշխատանքային նախագիծը մշակել էսքիզային լուծումները Պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

Էսքիզային լուծումները Պատվիրատուին ներկայացնել Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:»:

Ի վերջո պարզ չէ, թե Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացված էսքիզային լուծումների վերաբերյալ վերջինիս դիրքորոշումը ինչ ժամկետում պետք է տրվի Կատարողին:

Ավելին.

Պայմանագրի 7.1 կետի 2-րդ պարբերության համաձայն՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Նշված պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 31.05.2018թ.:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից վկայակոչված Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման 2018թ. սեպտեմբերի 18-ի արձանագրությունում, որպես Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք է նշվել այն հանգամանքը, որ Կատարողի կողմից էականորեն խախտվել է էսքիզային տարբերակի ներկայացման ժամկետը (17.06.2018թ.), ինչը չի համապատասխանում Պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի 4-րդ կետով սահմանված ժամկետին:

Միաժամանակ անհասկանալի է 2018թ. օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններով ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման նույնաբովանդակ առաջարկությունները՝ հաշվի առնելով, որ 2018թ. օգոստոսի 29-ին պատասխանատու ստորաբաժանումն արդեն իսկ առաջարկել էր միակողմանի լուծել վերոհիշյալ պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարությանը ներկայացնել պարզաբանում արձանագրված անհամապատասխանությունների մասին>>:

Վերոնշված փաստական հանգամանքներից ուղակիորեն բխում է, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեիկողմից ոչ իրավաչափ լուծումը այնքան ակնհայտ է եղել, որ նույնիսկ ՀՀ ՖՆ-ի կողմից պայմանագրի լուծման հիման վրա <<Վանարխ>> ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու նպատակով ներկայացված գրությունը բազմիցս հետ է վերադարձվել՝ Պատվիրատուի կողմից Պայմանագիրը անհիմն լուծելու հետևանքով:

Այնուհետև՝ Պատվիրատուն հասկանալով, որ մոտ 1.5 ամիս չկարողանալով հիմնավորել պայմանագրի լուծման հիմքերը՝ ՀՀ ՖՆ-ին ներկայացրեց նախկինում ՀՀ ՖՆ-ի կողմից պայմանագրի լուծման վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունների նոր պատասխան՝ հետևյալ բովանդակությամբ.

<<Երևանի N 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների 2018 թվականի մայիսի 17-ի N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման համար անհրաժեշտ հիմքերի առկայության վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով և (կամ) նախագծային կապալի պայմանագրով կարող է նախատեսվել նաև նախագծային փաստաթղթերի մշակման <էսքիզային նախագիծ> փուլ, ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները Պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով:

Փաստում ենք, որ <Վանարխ> ՍՊԸ-ի կողմից (այսուհետ՝ Կապալառու) օբյեկտի էսքիզային նախագիծը (առձեռն) Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացվել 2018 թվականի օգոստոսի 23-ին, որի վերաբերյալ առկա է օբյեկտի էսքիզային նախագծի հանձնման մասին (Կապալառուի կողմից ստորագրված) փաստաթուղթը (կցվումէ):

2018 թվականի օգոստոսի 29-ին հրավիրվել է պատասխանատու ստորաբաժանման նիստ՝ այդ թվում Երևանի N 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծային (էսքիզային) աշխատանքների կատարման ընթացքը գնահատելու և ըստ անհրաժեշտության նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

Քննարկումների շրջանակներում, պատասխանատու ստորաբաժանման կողմից, ոչ լիարժեք մշակված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով, առաջարկ է ներկայացվել «Վանարխ» ՍՊԸ-ի հետ կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

Սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, «Վանարխ» ՍՊԸ-ին տրվել է լրացուցիչ (ողջամիտ) ժամկետ՝ օբյեկտի էսքիզային նախագիծը վերանայելու և կրկին քննարկման ներկայացնելու համար:

2018 թվականի սեպտեմբերի 18-ին նիստի ընթացքում՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից կրկին քննարկման է ներկայացվել օբյեկտի էսքիզային նախագծի վերանայված տարբերակը, որը գնահատվել է որպես տեխնիկական բնութագրի պահանջներին չբավարարող աշխատանք (փաստաթուղթ), ինչի արդյունքում պատասխանատու ստորաբաժանման նախկին դիրքորոշումը, պայմանագիրը միակողմանի լուծելու անհրաժեշտության վերաբերյալ, մնացել է անփոփոխ:

Ինչ վերաբերում է 2018 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի արձանագրությամբ էսքիզային նախագծի մշակման համար նշված վերջնաժամկետին, ապա 2018 թվականի հունիսի 17-ը (17.06.2018թ) հաշվարկվել է պայմանագրի կնքման օրվա դրությամբ (17.05.2018թ), որն էլ առաջարկվում է գնահատել, որպես վրիպակ և «Էսքիզային նախագիծ» փուլի ավարտման ժամկետ դիտարկել 2018 թվականի հունիսի 29-ը, ինչը տվյալ պարագայում խնդրի կարգավորման համար էական դեր ունենալ չի կարող:

Միաժամանակ, 2018 թվականի մայիսի 17-ի N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ <Էսքիզային նախագիծ> փուլը դիտարկվել է, որպես կատարման ենթակա աշխատանքների (անբաժանելի) մի մաս, որի համաձայնեցման (ընդունման) համար սահմանվող ժամկետը չի գերազանցել պետական գնման պայմանագրի 3.2 կետով ամրագրված (ողջամիտ) 10 օրացուցային օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, օբյեկտի «Էսքիզային նախագիծ» փուլի համաձայնեցման (ընդունման) համար լրացուցիչ (այլ) ժամկետի սահմանման մասով Պատվիրատուի հատուկ դիրքորոշման կարիք չի առաջացել:

Ակնհայտ է, որ Կապալառուի կողմից ոչ պատշաճ մշակված և Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը

(այդ թվում էսքիզային նախագիծը) թե ժամկետի և թե բովանդակության առումով չի համապատասխանել պայմանագրով սահմանված պահանջներին, ինչն էլ հիմք է հանդիսացել պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի միակողմանի լուծման առաջարկ անելու համար:

Առդիր՝ 2018 թվականի օգոստոսի 28-ի և 2018 թվականի սեպտեմբերի 18-ի արձանագրությունների ամբողջական տարբերակների և <<Վանարխ>> ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի օգոստոսի 23-ի ստորագրված փաստաթղթի պատճենները՝ 1 ֆայլ>>:

Այսպիսով, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև վկայակոչված գրագրությունը վկայում է, ՀՀ ՖՆ-ի կողմից պայմանագրի լուծման հիման վրա <<Վանարխ>> ՍՊԸ-ին <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>> ներառելու նպատակով ներկայացված գրությունները բազմիցս հետ են վերադարձվել՝ Պատվիրատուի կողմից պայմանագիրը լուծելու ընթացակարգում թույլ տված բազմաթիվ խախտումների և համապատասխան ապացույցների բացակայության հիմքով:

Մասնավորապես.

1. 2018թ. սեպտեմբերի 18-ի արձանագրությունում, որպես Պայմանագիրը միակողմանի լուծելու հիմք, նշվել է այն հանգամանքը, որ Կատարողի կողմից էականորեն խախտվել է էսքիզային տարբերակի ներկայացման ժամկետը (17.06.2018թ.), ինչը չի համապատասխանում Պայմանագրի հավելված 1-ով հաստատված տեխնիկական բնութագրի 4-րդ կետով սահմանված ժամկետին: ՀՀ ֆինանսների նախարարությունը Պատվիրատուին ուղղված վկայակոչված գրությամբ արձանագրել է, որ անհասկանալի է 2018թ. օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններով ներկայացված՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման նույնաբովանդակ առաջարկությունները՝ հաշվի առնելով, որ 2018թ. օգոստոսի 29-ին պատասխանատու ստորաբաժանումն արդեն իսկ առաջարկել էր միակողմանի լուծել վերոհիշյալ պայմանագիրը:Հասկանալով թույլ տված բացթողումը և փորձելով ուղղել իրավիճակը՝ ի պատասխան վկայակոչված գրության՝ Պատվիրատուն ՀՀ ՖՆ-ի հայտնել է, որ 2018 թվականի օգոստոսի 29-ին հրավիրվել է պատասխանատու ստորաբաժանման նիստ՝ այդ թվում Երևանի N157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծային

(էսքիզային) աշխատանքների կատարման ընթացքը գնահատելու և ըստ անհրաժեշտության նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար: Քննարկումների շրջանակներում, պատասխանատու ստորաբաժանման կողմից, ոչ լիարժեք մշակված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով, առաջարկ է ներկայացվել <Վանարխ> ՍՊԸ-ի հետ կնքված N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ: Սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, <Վանարխ> ՍՊԸ-ին տրվել է լրացուցիչ (ողջամիտ) ժամկետ՝ օբյեկտի էսքիզային նախագիծը վերանայելու և կրկին քննարկման ներկայացնելու համար:

Հայտնում ենք, որ իբրև թե իրականացված նշված գործողությունները արձանագրված չեն որևէ փաստաթղթով, այդ թվում նաև 2018թ.օգոստոսի 29-ի արձանագրությամբ:

2. ՀՀ ՖՆ կողմից արձանագրվել է նաև, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից սխալ է հաշվարկվել էսքիզի ներկայացման վերջնաժամկետը, ինչը ընդունել է նաև Պատվիրատուն: ՀՀ ՖՆ-ին ուղղված իր վերջին գրությամբ՝ Պատվիրատուն փորձելով հիմնավորել էսքիզի ներկայացման ժամկետի հաշվարկում թույլ տված խախտումը՝ ներկայացրել է 2018թ. օգոստոսի 23-ով թվագրված օբյեկտի էսքիզային նախագծի հանձնման մասին փաստաթուղթ, իբրև թե ստորագրած <<Վանարխ>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից: Այսպիսով, Պատվիրատուի վերջին գրությամբ ամբողջ շեշտը դրվում է այն հանգամանքի վրա, որ <<Վանարխ>> ՍՊԸ-ի կողմից օբյեկտի էսքիզային նախագիծը՝ իբր թե առձեռն Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացվել միայն 2018թ. օգոստոսի 23-ին:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրություն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ 23.08.2018թ.-ով թվագրված փաստաթուղթը ստորագրված և թվագրված չէ <<Վանարխ>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից: Հատկանշական է, որ տարբեր ձեռագրերով է նշված թե՛ ստորագրությունը, և թե՛ ամսաթիվը, և տպավորությունն է ստեղծվում, որ դրանք նույնպես ստորագրվել են երկու տարբեր մարդկանց կողմից: Նույնիսկ փաստաթղթի մեջ առկա ստորագրության ուսումնասիրության և <<Վանարխ>> ՍՊԸ-ի տնօրենի կողմից Պայմանագրի ստորագրության ուսումնասիրության արդյունքում է ակնհայտ դառնում, որ փաստաթղթում առկա ստորագրությունը՝ <<Վանարխ>> ՍՊԸ-ի տնօրենի ստորագրությունը չէ:

Հայտնում ենք, որ <<Վանարխ>> ՍՊԸ-ի կողմից օբյեկտի էսքիզային նախագիծը Պատվիրատուին հանձնվել է դեռևս հունիս ամսվա վերջին օրերին, սակայն նշված էսքիզը հանձնելիս՝ Ընկերությանը Պատվիրատուի կողմից չի տրվել ստորագրելու համար որևէ փաստաթուղթ՝ պայմանագրով նման փաստաթուղթ պահաջված չլինելու հիմքով:

Սակայն ներկայումս պարզվում է, որ հանկարծ հայտնվել է մի փաստաթուղթ (Ընկերության տնօրենի կողմից չստորագրված, ինչը կհաստատի ցանկացած ձեռագրաբանական փորձաքննություն և դա ակնհայտ տեսանելի է), որը հավաստում է, որ օբյեկտի էսքիզային նախագիծը Պատվիրատուին հանձնվել է, իբրև թե, 2018թ.օգոստոսի 23-ին:

3. Եվ վերջապես, ամենակարևորը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից խախտվել է <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5>> ծածկագրով պայմանագրով նախատեսված տվյալ պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելու կարգը:

Այսպես, <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5>> ծածկագրով պայմանագրի 1.1. կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել պայմանագիրը սահմանված կարգով հաշվառելու օրվան հաջորդելու օրվանից 150 օրացուցային օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ <<ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5>> ծածկագրով պայմանագիրը սահմանված կարգով ՀՀ ՖՆ

կողմից հաշվառվել է 31.05.2018թ., հետևաբար Պայմանագրով սահմանված աշխատանքի ավարտը, ըստ Պայմանագրի հավելված 1-ի, վրա էր հասնելու միայն 28.10.2018թ.: Ավելին, Պայմանագրի 7.6. կետի համաձայն՝ նշված պայմանագրի կատարման վերջնաժամկետը կարող էր երկարաձգվել ևս 30 օրացուցային օրով:

Մինչդեռ Պատվիրատուի կողմից, Պայմանագրի 2.1.3. կետի <<բ>> կետի խախտմամբ, նշված պայմանագիրը լուծվել է մինչև պայմանագրով նախատեսված աշխատանքի համար սահմանված ժամկետի ավարտը: Փաստորեն, Պայմանագիրը լուծվել է ոչ թե Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետի խախտման հետևանքով, այլ ընդամենը էսքիզային տարբերակի ներկայացման ժամկետը խախտելու համար, ինչը չի հանդիսանում պայմանագրի աշխատանքի (խոսքը Պայմանագրի 1.1 կետով սահմանված ողջ ծավալով աշխատանքի մասին է) կատարման ժամկետ:

Ավելին, խախտելով պայմանագրով սահմանված վկայակոչված դրույթները, Պատվիրատուն 29.08.2018թ. արձանագրությամբ արձանագրել է հետևյալը. <<Հաշվի առնելով <<Վանարխ>> ՍՊԸ-ի ոչ պրոֆեսիոնալ մոտեցումը Երևանի թիվ 157 դպրոցիէսքիզային նախագծի մշակմանը և բովանդակությանը, ինչպես նաև պայմանագրով պահանջվող էսքիզային նախագծի հիմնովին լրամշակման զգալի ծավալը, որի կատարումը պայմանագրով նախատեսված ժամկետում գտնում ենք ոչ իրատեսական, Պայմանագրի 2.1.3. կետի պահանջներից ելնելով՝ հանձնաժողովը առաջարկում է լուծել Պայմանագիրը:

Նշվածը հերթական անգամ ապացուցում է վիճարկվող պայմանագրի լուծման ոչ իրավաչափության և սուբյեկտիվության մասին, քանզի լուծման հիմքում դրվել են ոչ թե համապատասխան իրավական նորմերը, այլ ընդամենը Պատվիրատուի ներքին, սուբյեկտիվ համոզմունքները»:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է հաշվի առնել ներկայացված փաստերը և փաստական հանգամանքները և <<Վանարխ>> ՍՊԸ-ին չվերագրել <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի <<ա>> ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձ-

նածորևէպարտավորության խախտում, և վերջինիսի չներառել <<Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում>>:

Ընկերությունը պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/210 ընթացակարգի շրջանակներում 25.12.2018թ. ժամը 10:30-ին, 11.01.2019թ. ժամը 10:50-ին և 15.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 15.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. **<u>ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կարիքների համար 2018 թվականի ապրիլի 6-ին կազմակերպված ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 ծածկագրով Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի մայիսի 17-ին <<Վանարխ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքվել է N ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Հիմք ընդունելով պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018 թվականի օգոստոսի 29-ի և սեպտեմբերի 18-ի արձանագրություններով ներկայացված Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ առաջարկությունը և Պայմանագրի 2.1.3 կետը՝ Կոմիտեն վերը նշված կազմակերպության հետ կնքված Պայմանագիրը 2018 թվականի սեպտեմբերի 27-ից միակողմանի լուծել է՝ Պայմանագրով ստանձնած պարտավորությունները խախտելու հիմքով:

Համաձայն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 45-րդ կետի՝ կից

ներկայացվում է <<Վանարխ>> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տվյալները»:

Ի պատասխան ՀՀ ֆինանսների նախարարության 06.12.2018թ. թիվ 01.1/26-3/22514-18 գրության՝ Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Երևանի N 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների 2018 թվականի մայիսի 17-ի N ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պետական գնման պայմանագրի միակողմանի լուծման համար անհրաժեշտ հիմքերի առկայության վերաբերյալ հայտնում եմ, որ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի (այսուհետ՝ Պատվիրատու) նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 128-Ն հրամանի համաձայն՝ ճարտարապետահատակագծային առաջադրանքով և (կամ) նախագծային կապալի պայմանագրով կարող է նախատեսվել նաև նախագծային փաստաթղթերի մշակման <էսքիզային նախագիծ> փուլ, ծավալատարածական և ճարտարապետահատակագծային լուծումները Պատվիրատուի և իրավասու մարմնի հետ նախապես համաձայնեցնելու նպատակով:

Փաստում ենք, որ <Վանարխ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից (այսուհետ՝ Կապալառու) օբյեկտի էսքիզային նախագիծը (առձեռն) Պատվիրատուի համաձայնեցմանն է ներկայացվել 2018 թվականի օգոստոսի 23-ին, որի վերաբերյալ առկա է օբյեկտի էսքիզային նախագծի հանձնման մասին (Կապալառուի կողմից ստորագրված) փաստաթուղթը (կցվում է):

2018 թվականի օգոստոսի 29-ին հրավիրվել է պատասխանատու ստորաբաժանման նիստ՝ այդ թվում Երևանի N157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծային (էսքիզային) աշխատանքների կատարման ընթացքը գնահատելու և ըստ անհրաժեշտության նախագծում փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

Քննարկումների շրջանակներում, պատասխանատու ստորաբաժանման կողմից, ոչ լիարժեք մշակված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքներով, առաջարկ է ներկայացվել «Վանարխ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ կնքված N ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ:

Սակայն, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը, <Վանարխ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրվել է լրացուցիչ (ողջամիտ) ժամկետ՝ օբյեկտի էսքիզային նախագիծը վերանայելու և կրկին քննարկման ներկայացնելու համար:

2018 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի ընթացքում՝ <Վանարխ> սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից կրկին քննարկման է ներկայացվել օբյեկտի էսքիզային նախագծի վերանայված տարբերակը, որը գնահատվել է որպես տեխնիկական բնութագրի պահանջներին չբավարարող աշխատանք (փաստաթուղթ), ինչի արդյունքում պատասխանատու ստորաբաժանման նախկին դիրքորոշումը, պայմանագիրը միակողմանի լուծելու անհրաժեշտության վերաբերյալ, մնացել է անփոփոխ:

Ինչ վերաբերում է 2018 թվականի սեպտեմբերի 18-ի նիստի արձանագրությամբ էսքիզային նախագծի մշակման համար նշված վերջնաժամկետին, ապա 2018 թվականի հունիսի 17-ը (17.06.2018թ) հաշվարկվել է պայմանագրի կնքման օրվա դրությամբ (17.05.2018թ), որն էլ առաջարկվում է գնահատել, որպես վրիպակ և «Էսքիզային նախագիծ» փուլի ավարտման ժամկետ դիտարկել 2018 թվականի հունիսի 29-ը, ինչը տվյալ պարագայում խնդրի կարգավորման համար էական դեր ունենալ չի կարող:

Միաժամանակ, 2018 թվականի մայիսի 17-ի N ՀՀ ՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագրի 3.3 կետի համաձայն՝ <Էսքիզային նախագիծ> փուլը դիտարկվել է, որպես կատարման ենթակա աշխատանքների (անբաժանելի) մի մաս, որի համաձայնեցման (ընդունման) համար սահմանվող ժամկետը չի գերազանցել պետական գնման պայմանագրի 3.2 կետով ամրագրված (ողջամիտ) 10 օրացուցային օրը:

Հաշվի առնելով վերոգրյալը, օբյեկտի <Էսքիզային նախագիծ> փուլի համաձայնեցման (ընդունման) համար լրացուցիչ (այլ) ժամկետի սահմանման մասով Պատվիրատուի հատուկ դիրքորոշման կարիք չի առաջացել:

Ակնհայտ է, որ Կապալառուի կողմից ոչ պատշաճ մշակված և Պատվիրատուի համաձայնեցմանը ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթը (այդ թվում էսքիզային նախագիծը) թե ժամկետի և թե բովանդակության առումով չի համապատասխանել պայմանագրով սահմանված պահանջներին, ինչն էլ հիմք է հանդիսացել պատասխանատու ստորաբաժանման կողմից պայմանագրի միակողմանի լուծման առաջարկ անելու համար»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/210 ընթացակարգի շրջանակներում 25.12.2018թ. ժամը 10:30-ին, 11.01.2019թ. ժամը 10:50-ին և 15.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 15.01.2019թ. ժամը 11:00-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

4. ՍՑ-ԱՄ-2018/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/210 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» ծածկագրով գնման պայմանագիրը, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Վանարխ» ՍՊԸ-ն)ստանձնում է Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

3. Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո այն պատվիրատուի կողմից կատարողին գրությամբ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից 150 օրացուցային օր:

Պայմանագրի հավելված 1-ի՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, համաձայն՝ նախագծային աշխատանքներն իրականացնել 1 փուլով, այն է՝

- «Աշխատանքային նախագիծ»

Աշխատանքային նախագիծը մշակել էսքիզային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

• Էսքիզային լուծումները պատվիրատուին ներկայացնել պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

4. Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

5. Նույն կետի 7.2 ենթակետի համաձայն՝ ***Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:***

6. ***Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 31.05.2018թ.:***

7. Ընկերությանն ուղղված 26.09.2018թ. թիվ 02/16.4/4758-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքված Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5 պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018թ. օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 18-ին ներկայացված արձանագրությունները, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018թ. սեպտեմբերի 27-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 3 740 000 ՀՀ դրամի չափով,

որի վերաբերյալ ծանուցումը 2018թվականի սեպտեմբերի 27-ին կտեղադրվի gnumner.am կայքում:

8. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման 2018թ. օգոստոսի 18-ի և 2018թ. սեպտեմբերի 29-ի արձանագրությունների հիմքում դրվել է՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ոչ լիարժեք էսքիզային նախագիծը և Պայմանագրով նախատեսված ժամկետում դրա կատարման ոչ իրատեսական լինելը, որի հիման վրա Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի պահանջը՝ միակողմանի լուծել է Պայմանագիրը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23786-18 գրությունը, ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի 01.10.2018թ. թիվ N 02/16.4/4827-18, 25.10.2018թ. թիվ 02/16.4/5362-18 և 25.10.2018թ. թիվ 02/14.1/6199-18 գրությունները և կից փաստաթղթերը, «Վանարխ» ՍՊԸ-ի 11.01.2019թ. գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքվել է «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» ծածկագրով գնման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետով սահմանվել է, որ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը (տվյալ դեպքում՝ «Վանարխ» ՍՊԸ-ն) ստանձնում է Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք) համաձայն՝ պայմանագրի անբաժանելի

մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Նույն կետի 1.2 ենթակետով սահմանվել է, որ Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել Պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո այն պատվիրատուի կողմից կատարողին գրությամբ ուղարկելու օրվան հաջորդող օրվանից 150 օրացուցային օրը:

Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանվել է, որ նախագծային աշխատանքներն իրականացնել 1 փուլով, այն է՝

- «Աշխատանքային նախագիծ»

Աշխատանքային նախագիծը մշակել էսքիզային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

- Էսքիզային լուծումները պատվիրատուին ներկայացնել պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Նույն կետի 7.2 ենթակետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 31.05.2018թ.:

Ընկերությանն ուղղված 26.09.2018թ. թիվ 02/16.4/4758-18 գրությամբ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն հայտնել է, որ հիմք ընդունելով ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի մայիսի 17-ին կնքված Երևանի թիվ 157 հիմնական դպրոցի վերակառուցման նախագծահետազոտական աշխատանքների ձեռքբերման «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» պայմանագրի կատարման ընթացքի վերաբերյալ պատասխանատու ստորաբաժանման կողմից 2018թ. օգոստոսի 29-ին և սեպտեմբերի 18-ին ներկայացված արձանագրությունները, ինչպես նաև Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեն 2018թ. սեպտեմբերի 27-ից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ 3 740 000 ՀՀ դրամի չափով, որի վերաբերյալ ծանուցումը 2018 թվականի սեպտեմբերի 27-ին կտեղադրվի gnumner.am կայքում:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման 2018թ. օգոստոսի 18-ի և 2018թ. սեպտեմբերի 29-ի արձանագրությունների հիմքում դրվել է՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ոչ լիարժեք էսքիզային նախագիծը և Պայմանագրով նախատեսված ժամկետում դրա կատարման ոչ իրատեսական լինելը, որի հիման վրա Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի պահանջը, միակողմանի լուծել է Պայմանագիրը:

Այսպիսով ուսումնասիրելով 27.09.2018թ. Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծման հիմքը, այն է՝ «Վանարխ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ոչ լիարժեք էսքիզային նախագիծը և Պայմանագրով նախատեսված ժամկետում դրա կատարման ոչ իրատեսական լինելը, որի հիման վրա Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի պահանջը, միակողմանի լուծել է Պայմանագիրը, հայտնում եմ հետևյալը.

Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝***

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

<u>բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:</u>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

ՍՑ-ԱՄ-2018/210 ընթացակարգի շրջանակներում Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնել է, որ Պայմանագրի միակողմանի լուծման համար՝ 27.09.2018թ., հիմք է հանդիսացել այն հանգամանքը, որ Ընկերության կողմից խախտվել է Պայմանագրով սահմանված Էսքիզային լուծումները Պատվիրատուին ներկայացնելու ժամկետը, այն է 30 օրացուցային օրը, մինչդեռ՝ արձանագրում եմ, որ Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանվել է, որ ***նախագծային աշխատանքներն իրականացնել 1 փուլով***, այն է՝

- «Աշխատանքային նախագիծ»

Աշխատանքային նախագիծը մշակել էսքիզային լուծումները պատվիրատուի հետ համաձայնեցնելուց հետո:

- Էսքիզային լուծումները պատվիրատուին ներկայացնել պայմանագիրը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո 30 օրացուցային օրվա ընթացքում:

Միաժամանակ արձանագրում եմ, որ ՀՀ քաղաքաշինության պետական կոմիտեի և «Վանարխ» ՍՊԸ-ի միջև 17.05.2018թ. կնքված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» ծածկագրով գնման պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքի կատարման վերջնաժամկետ է սահմանվել ***150 օրացուցային օրը***:

Պայմանագրի 7-րդ կետի 7.1 ենթակետի համաձայն՝ ***Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:***

Նույն կետի 7.2 ենթակետի համաձայն՝ **Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:**

<u>Պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 31.05.2018թ.:</u>

Այսպիսով՝ վերոհիշյալ նորմերը հստակ սահմանում են, որ Պայմանագրի հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, աշխատանքի կատարման վերջնաժամկետը՝ 150 օրացուցային օրը, հաշվարկվում է Պայմանագիրը սահմանված կարգով հաշվառելու օրվան հաջորդելու օրվանից, իսկ Պայմանագիրը սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառվել է 31.05.2018թ., հետևաբար Պայմանագրով սահմանված աշխատանքի ավարտը, ըստ Պայմանագրի հավելված 1-ի, վրա էր հասնելու 28.10.2018թ.:

Այսպիսով, Պայմանագրի 2.1.3. կետի համաձայն՝ ***Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը:***

Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

Վերը նշված փաստերով պայմանավորված, գտնում եմ, որ Պատվիրատուն 17.05.2018թ. կնքված «ՀՀՔՊԿ-ԳՀԱՇՁԲ-18/5» ծածկագրով պայմանագիրը 27.09.2018թ. միակողմանի լուծելով Պայմանագրի 2.1.3. կետի «բ» ենթակետի համաձայն՝ հիմքում դնելով Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված էսքիզային լուծումները պատվիրատուին ներկայացնելու ժամկետի խախտումը, այն է 30 օրացուցային օրը, գործել է նշված կետի խախտմամբ, քանի որ Պայմանագրի հավելված 1-ի համաձայն՝ աշխատանքը նախատեսվել է կատարել 1 փուլով, որի կատարման համար Պայմանագրի հավելված 1-ով՝ վերջնաժամկետ է սահմանվել 150 օրացույցային օրը, այսինքն՝ 28.10.2018թ., մինչդեռ Պայմանագիրը միակողմանի լուծվել է մինչև պայմանագրով նախատեսված ողջ ծավալով աշխատանքի կատարման համար սահմանված ժամկետի ավարտը, ուստի նման փաստական հանգամանքներով պայմանավորված, գտնում եմ, «Վանարխ» ՍՊԸ-ն թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված խախտում, հետևաբար «Վանարխ» ՍՊԸ-ին գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.12.2018թ. թիվ 27/26-3/23786-18 գրությամբ «Վանարխ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 06931375) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ